Դեսպանն Գաղղիոյ ստիպեալ 'ի թախանձանաց Լատին կը-
ղերց, մատոյց գիր ամբաստանութեան 'ի Դուռն զազգէն
Հայոց վասն Համբարձման տեղւոյն յեցեալ յիլամն, զոր
տուեալ էր Էսսէյիտ Ալի Դատաւորն Երուսաղէմի, յորում
յիշէր և զհրովարտակն նոցին տուեալ 'ի Թուին ١١٩٠։

Թէպէտ և Հայք եւս ունէին զհին և զնոր վաւերական
գրեանս, սակայն Դուռն ոչ կամէր դարձուցանել զերեսս
յերկուց կողմանց, և մինչ այսպէս յերերի կայր խնդիրն,
փութացոյց Դեսպանն զերկրորդ թուղթ իւր խիստ քան
զառաջինն, և ստիպէր յանձնել զրովանդակ տեղին 'ի ձե-
ռըս Լատին կղերց, և յաւել ասել՝ թէ զարմանք են զի ոչ
գործադրին նամականիք, մինթէ Դեսպանն ինքնի՞ն եկեսցէ։ Թէպէտ և ծանեան Հայք հաւաստեաւ զհակառակու-
թիւնս և զարիաջան աշխատութիւնս նորին առ այս գործ,
սակայն ոչ երբէք լքան 'ի խորհրդոց իւրեանց, և վերըս-
տին մատուցին գիր աղաչանաց 'ի Դուռն՝ տալ հրովարտակ
'ի հաստատութիւն առաջնոցն։ Ալրտէին և Ցոյնք և կամէին
'ի ձեռս բերել մասն ինչ 'ի տեղւոյն. զի դուռն յառաջա-
գոյն ծանուցեալ էր նոցա։ Ցուսկ ուրեմն զիջաւ Տէրու-
թիւնն 'ի խնդիր Դեսպանին և ետ հրովարտակ վասն Լա-
տինաց ١٢٥٢ Զիլհիճէ վերջ, և ընթերցաւ 'ի Դատարանն
Երուսաղէմի առաջի բազմութեան Այլազգեաց և Քրիստո-
նէից (յ7 Յունիսի, 1837), որոյ իմաստքն են «Ի կործա-
նիլ Գմբեթի Համբարձման տեղւոյն յերկրաշարժէ, Հայք
եւ Ցոյնք բաժանորդ եղեն 'ի շինութեան, զի Լատինք 'ի
տարւոջ միանգամ 'ի ներքոյ նորին պատարագէին, և այլք
'ի գաւիթս 'ի վերայ իւրաքանչիւր սեղանոյ. եւ 'ի լինել
խռովութեան 'ի մէջ երից ազգաց վասն ծախուց շինու-
թեան, Դատաւորն ետ Հէօճճէթ Լատինաց և զրկեաց զեր-
կուս ազգս։ Այլ յորժամ առին Հայք հրովարտակ սակս շի-
նութեան Տաճարին Ս. Յարութեան, կամեցան նովաւ յա-
փըշտակել և զՀամբարձման տեղին՝ յոր կատարէին Լա-
տինք զպաշտամունս ըստ Հէօճճէթի դատարանի. և Դես-
պանն Գաղղիոյ խնդրեաց վերստին դարձուցանել զայն
առ նոսա։ Յարձանագիրս Արքունի դիւանին գտաւ հրո-
վարտակ տուեալ Լատինաց զկնի հրդեհի Տաճարին Սուրբ
Յարութեան, յաղագս յափշտակելոյ Յունաց զմասունս